ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 7/1

14 փետրվարի 2014 թ.

Քննարկվեց Ա/Ձ Գևորգ Հունանյանի 07.02.2014 թ-ի բողոք-գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 29.01.2014 թ-ի թիվ 246646 որոշման դեմ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ պետի 28.11.2013 թ-ի թիվ 2128383 հանձնարարագրի Ա/Ձ Գևորգ Հունանյանի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ 09.12.2013 թ-ի թիվ 2128383 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով կիրառվել է <Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված պատասխանատվության միջոցը և լրացուցիչ գանձման է առաջադրվել 300.000 դրամ:

Հիմք ընդունելով վերոգրյալը ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ պետի կողմից 29.01.2014 թ-ին կայացվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 246646 որոշումը, որի համաձայն Ա/Ձ Գևորգ Հունանյանը <Վարչական իրավախախտումների վերաբերյալ> ՀՀ օրենսգրքի 169.1 հոդվածի հատկանիշներով ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 25.000 դրամ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Ա/Ձ Գևորգ Հունանյանի և ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ ներկայացուցիչների բերված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Սույն գործի քննարկման ընթացքում նշվեց, որ Հանձնաժողովի 27.12.2014 թ-ի նիստում քննության է առնվել Ա/Ձ Գևորգ Հունանյանի 20.12.2013 թ-ի բողոք-գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ 09.12.2013 թ-ի թիվ 2128383 ստուգման ակտի դեմ: Արդյունքում Հանձնաժողովը, ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի <ա> ենթակետի դրույթներով, ընդունել է թիվ 62/9 որոշումը, որի համաձայն Ա/Ձ Գևորգ Հունանյանի 20.12.2013 թ-ի բողոք-գանգատի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կասեցվել է:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 29.01.2014 թ-ի թիվ 246646 վիճարկվող որոշումն անխզելիորեն կապված է ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ 09.12.2013 թ-ի թիվ 2128383 ստուգման ակտի հետ, իսկ վերջինիս կապակցությամբ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում հարուցված վարչական վարույթը կասեցվել է, ինչպես նաև հիմք ընդունելով այն հանգամանքը, որ առանց ստուգման ակտի դեմ բերված բողոքի վերաբերյալ վերջնական եզրակացության հանգելու անհնար է սույն գործով որոշման կայացումը, Հանձնաժողովը, ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի <ա> ենթակետի դրույթներով գտնում է, որ Ա/Ձ Գևորգ Հունանյանի 07.02.2014 թ-ի բողոք-գանգատի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

Ո ր ո շ ու մ է՝

Ա/Ձ Գևորգ Հունանյանի 07.02.2014 թ-ի բողոք-գանգատի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Հանձնաժողովի նախագահ **Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**